



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Kingsfield

28th March

891.99

6-58

2088

19 NOV 2011

ՄԵԼք. ԵՍՈՅԵԱՆ

ՄԻ ԹՈՒԹԱԼԻԱՆ


(Պատկեր Բալախանու կիանից)

№ 18.

Գինն է Յ Կ Ա Խ Պ.

Հրատարակութիւն
Թիֆլիսի Հռաջարական
Ընսերութեան

Թ Ի Ֆ Լ Ի Ա
Էլեմենտար Տպարան „ՀԵՐԱԿՈՎ“ բնի.
Փառը. գ. № 15.
(85)



08.04.2013

«ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԲՈԿԵՐՈՒԹԻՒՆԸ»

Ընդունում է տպագրութեան յար-
մար զբաժնեսը—վիպական, ժողովր-
դականացըած, գիտական, առողջապա-
հական, պատմական, գիւղատնուեսա-
կան, մանկական և այլն. զբաժները
լինելու են 1—2 տպագրական թերթի
ծառալով։

Հեղինակների և թարգմանիչների
վարձատրութեան չափը որոշում է «Ըն-
կերութիւնը»։

Հարկաւոր են գիրք տարածող զոր-
ծակալներ՝ բաւական ձեռնուու պայ-
մաններով։ Գործակալների անունները
կը յայտաբարւեն թէ գրքերի վրայ և
թէ թերթերում։

Ընկերութեան հասցէն։

Въ г. Тифлисъ.

Въ Тифлисское Издательское Т-во,
Г. Бабурянцъ, п. я. за № 187.

891.99

6-58

ՄԵՂ. ԵՄԵՑԵՍՆ

2018

ՄԻ ՌՈՒԲԼԻՔ...

(Պատկեր Բալախանու կեանից)

100
800

ԳՐԱՆ Է Յ ԿՈՊ.

№ 18.

Հրատարակութիւն
Թիֆլիսի Հրամարական
Հնկերութեան

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԱՆ» Ընկ. 1905 թ.
Տպարեան փողոց № 15
(85)

Մ Ի Ր ՈՒ Բ Լ Ի ...

(Պատկեր Բալախնական կեանից)

I

«Վիշապ» նաւթարդիւնաբերական
ընկերութեան գործերի կառավարիչ
Սամսոնեանը ուրախ տրամադրութեան
մէջ էր: Վաղ առաւօտից սկսած՝ նա
անդադար հրամաններ ու պատւէրներ
էր տալիս ծառայողներին՝ առանց բար-
կանալու և թթւելու, միանդամայն իր
ամենօրեայ սովորութեան հակառակ,
նոյնիսկ մթերանոցում (матеріальныи
складъ) ժպտաց գործակատարի երե-
սին: Ամենքն էլ մնացել էին զարմա-
ցած և չըգիտէին ինչով բացատրել կա-
ռավարչի այդ յանկարծական տրամա-
դրութեան պատճառը: Ծառայողներից
իւրաքանչիւրը այդ երկոյթին իր բա-
ցատրութիւնն էր տալիս: Մէկն ասում
էր՝ երեկի ոռձիկը աւելացրել են, մէկը
թէ՝ շատրւանի ժամանակ իրան խոս-
տացւած պարզել ստացել է ընկերու-

Дозволено цензурою. 28 января 1905 г. Тифлисъ.

թիւնից. միւսը ուզում էր հաւատացնել,
որ մի յայտնի նաւթարդիւնաբերող ար-
դէն համաձայնւել է իր քրոջ դստեր
ձեռքը կարապետ իւանիչին (այսպէս
էր կառավարչի անունը) տալ և աւել
ունիկով ու «ձեռնու» պայմաններով
իր նաւթահանքի կառավարիչ է հրա-
ւիրում, և այն և այն, հազար ու մի
ենթադրութիւններ:

Կառավարչի տրամադրութեան փոխ-
ւելը մի այնպիսի խոշոր երեսյթ էր
ծառայողների շրջանում, որ ստիպում
էր ենթադրել թէ մի բան կայ, — ով էր
տեսել նրան ժպտալիս ծառայողների
երեսին իր միամեայ կառավարութեան
ամբողջ ընթացքում, որ միշտ թթւած,
միշտ նօթերը կիտած էր լինում...

Ծառայողների արած ենթադրու-
թիւններից շատ շատերը ճիշտ էին:
Ճիշտ էր, որ նա պարզե էր ստացել
լաւ շատրւանի համար. ճիշտ էր, որ
նրան ուրիշ ֆիրմայի կառավարիչ էին
հրաւիրում, սակայն նրա ուրախութեան
գլխաւոր պատճառը այդ չէր: Սամսո-
նեանը ընկերութիւնից թոյլտութիւն
էր ստացել և այդ օրը երեկոյեան պի-
տի ուղևորւէր կովկասեան հանքային

ջրերը ամառանոց: Եւ այն միտքը,
որ ինքը առաջին անգամ, ուսանողական
հազար ու մի նեղութիւններով լի կեան-
քից յետոյ ամառանոց է գնում ոչ իբ-
րև մի անյայտ անձ, այլ իբրև կառավա-
րիչ և լիակատար ղեկավար նաւթային
գործերի մի ահազին ֆիրմայի և վեր-
ջապէս, իբրև ի վաղուց անտի իր փայ-
փայած լողէալների հասած մի անձնա-
ւորութիւն՝ յակամայից նրան մի ու-
րախ արամադրութեան մէջ էր գնում:
Ահա, այս հանգամանքն էր կարապետ
իւանիչի ուրախ տրամադրութեան բուն
կենդրունը:

II

Նաւթահանքում իր առաւօտեան
սովորական պարունակութեան վերջացնելուց
յետոյ, Սամսոննեանը վերադարձաւ գրա-
սենեակ և դիմելով հաշւապահին՝ ասաց.

— Լևն, այսօր ամսի ծն է և ես
երեկոյեան ճանապարհուելու եմ Պետ-
ափօրսկ. անցած ամսի «սպիսովը» տուր
ստորագրեմ, որ ուղարկէք քաղաքի
գրասենեակը, փողերը բերեն բաժանեն:

Հաշւապահը ծառայողների ոռմիկ-

ների անւանացուցակը տւաւ կառավարչին և սա նստելով իր սովորական տեղը, սկսեց թղթերը թերթել: Մի քանի ըոսէ թերթելուց յետոյ, յանկարծ խոժոռեց աշքերը և լուրջ կերպով հարցրեց հաշւապահին:

— Աւան, Ծատուր Աղաջանօվի և Ղևոնդ Բարխուդարօվի ոռճիկը ինչո՞ւ է աւել գրած սպիսոկում. մենք 18 ըուբլի ստացող «ըաբոչից» չունենք. բոլորն էլ 17-են ստանում:

— Այս, ճիշտ է, դրանք էլ 17 էին ստանում, բայց Գրիգորը մի-մի ըուբլի աւելացրել է այս ամսից, — վախկոտ ձայնով պատասխանեց հաշւապահը:

— Ինչո՞ւ է աւելացրել:

— Ասում էր, դուք էք աւելացրել:

— Ես չեմ աւելացրել. բարկացաւ կառավարիչը: — Եւ դու էլ առանց հաստատն իմանալու, վերցրել ես ու գիրք մտցրել: Շատ էլ պրիկաշչիկը գրել է: Վերցուր այս ըոսէիս ջնջիր ու 17 գրիր...

— Կարապետ իւանիչ, ես ինչ անեմ, որ ինձ մեղադրում էք. ես հարցրի՝ ասաց թէ...

— Լաւ, լաւ, զլուխոս մի տանիք

բոյ յիմար պատճառներով. բարկացած կերպով ընդհատեց նրան կառավարիչը: Այդ թող առաջին և վերջին անգամը լինի. ես այդպիսի անկարգութիւններ չեմ սիրում:

Մօտ քսան և ութ տարեկան մի երիտասարդ էր կարապետ իւանիչը. բարեկազմ հասակով և վայելուչ արտաքինով: Նրա շարժումներին նայելով՝ հազիւ թէ կարելի լինէր նրանում լրջութիւն գտնել, չնայած որ ինքը աշխատում էր միշտ լուրջ և բարկացած երեալ. իսկ նրա մի զոյտ, իսխատ շարժուն աշքերը կարծես ասում էին ձեզ, որ այդլը ջութիւնը, բարկութիւնը և շարժումները, բոլորը, բոլորը կեղծ ու մտացածին են, և միայն ծառայողների վրայ էֆֆեկտ գործելու պաշտօն ունին: Նրա վերջին խօսքերը — թէ «Ես այդպիսի անկարգութիւններ չեմ սիրում» — կարծես ամենակին սազ չէին զալիս նրան...

Խօսքը վերջացնելով, կարապետ իւանիչը ծառային հրամայեց հեռախօսի նաւթահանքի գործակատար Գրիգորին կանչել գրասենեակ, իսկ ինքը նորից աշքերը խոժոռելով, մտաւ իր առանձնասենեակը:

III

Կէս օրին մօտ էր: Արդէն զրասենեալի ծառայողները պատրաստում են թողնել իրանց պաշտօնատեղին, երբ ներս մտաւ նաւթահանքի գործակատար Գրիգորը: Դա միջակ հասակով և համակրելի արտաքինով մի երիտասարդ էր: Երկարավիզ կօշիները և մոխրագոյն պիջակը, որ ամբողջովին թաթախւած էին նաւթով, նրան գործունեայ մարդու տեսք էին տալիս: Գլխին ծածկած ունէր լայնեզր գլխարկ, որ նոյնպէս ծածկւած լինելով նաւթի բըծերով, վաղուց արդէն կորցրել էր իր խկական գոյնը: Նա մօտեցաւ, զլիի մի թեթևակի շարժումով բարեկց կառավարչի օգնականին, որ նստած էր էր կառավարչի սեղանի մօտ և յետոյ մօտենալով հաշւապահին, կանգնեց նրա սեղանի առաջ:

Նա արդէն զիտէր, թէ ինչու համար են իրան հրաւիրել զրասենեակ, որովհետև վաղուց արդէն սպասում էր: Այդ ժամին նըա դէմքի վրայ կարելի էր կարդալ և բարկութիւն, և վրը-

գովմունք. և հէնց այդ էր պատճառը, որ գրասենեակում ներկայ եղողներից աչ ոք չէր ուզում խօսեցնել նրան:

Երբ ծառան գործակատարի գալը հեռախօսով յայտնեց հարևան սենեակում նստած կառավարչին, վերջինս բանալով իր առանձնասենեակի դուռը, կանգնեց դաների մէջ տեղը և բարկացած եղանակով զիմեց գործակատարին.

—Գրիգոր, ինչու ես այն երկու բարոշիներին աւել գրել տարելումդ:

—Աւելացրել եմ մի-մի մանէթ, պատասխանեց Գրիգորը:

—Ինչու:

—Որովհետև ժամանակն էր:

—Շատ էլ ժամանակն էր, բայց քեզ ով իրաւունք տւաւ, —մի քայլ առաջ գալով՝ վրայ բերեց կառավարիչը:

—Դուք էք ինձ իրաւունք տւել, ես առանց իրաւունքի չեմ աւելացրել և երկրորդ՝ կարծեմ որ նաւթահանքի գործակատար եմ, կէս հեգնական և կէս վրդովւած պատասխանեց Գրիգորը:

—Գործակատար, գործակատար, —նկատեց կառավարիչը, արհամարհական եղանակով շեշտելով գործակատար խօսքը: Շատ էլ պրոմըսլի պրիկաշչիկ ես.

որ լսել ես թէ ոռճիկ են աւելացնում,
հէնց կարծել ես թէ ամեն տեղ կարելի
է այդպիսի իրաւունքներ բանեցնել...

— Կարապետ իւանիչ, այստեղ իրաւունքի խնդիր չկայ. վրդովմունքը զապելով պատասխանեց Դրիգուը: — Շատըրւանի ժամանակ, որ օրը երկու մանէթով բանւոր չէր ձարւում, ձեր թոյլտութեամբ, ես խոստացայ նրանց ոռճիկները աւելացնել, որ մնան աշխատեն. թէ չէ մարդիկը գնում էին գիւղ. ամառ ժամանակ է, մի՞թէ չէք իմանում, որ ամառը լաւ բանւոր չէ գտնւում:

— Բարոչիների համար ամառը ծառայելու ամենալաւ ժամանակն է. իսկոյն վրա բերեց կառավարիչը. — Ճմեռը որ ձիւնի մէջ սատկոտում են, լաւ է լինում... ով չի ուզում ծառայել, կարող է հեռանալ...

— Հիմա, ինչնիցէ, խոստացել ենք մարդկանց պահել:

— Խոստացել եմ. որ խոստացել եմ, կարծես թէ դազաւօր եմ կատել: Հիմա չեմ աւելացնում, մի ամսից յետոյ եմ աւելացնում... Կարծես թէ նրանք որ չլինէին, «Վիշապ»-ի գործերը

աստանօվկա էին դառնալու: Դու էլ որ նրանց տեղ լեզու ես դարձել, չեմ իմանում քո միտքն ինչ է:

— Ես ոչ մի միտք չունիմ:

— Որ միտք չունես, դու նրանց դաւէրնին ես:

— Ես դաւէրնի չեմ. բայց որ խոստացել ենք, պիտի կատարենք. այլապէս խարեբայութիւն է դուրս գալիս:

— Այդ քո գործը չէ, գոռաց կառավարիչը. — Ճեմ իմանում, դու այստեղ ծառայելու ես եկել, թէ խրատներ տալու: Ինձ շատ խօսող պրիկաշիկ չի հարկաւոր. թէ ծառայում ես՝ կարգին ծառայիր. թէ չես ուզում ծառայել՝ հեռացիր:

— Իմ կարծիքով ես շատ լաւ եմ ծառայում, պարոն Սամսոնօվ, իսկ եթէ իմ ծառայութիւնը ձեզ հաճելի չէ, հեռացրէք: Այդ չէ ձեր ամբողջ քաջութիւնը, եթէ միայն քաջութիւն կարելի է համարել մարդկանց զրկելը մի կտոր հացից, որ տալիս էք նրանց, ձեր կարծիքով իբր ողորմութիւն. ասաց Գրիգորը և դուրս գնաց:

— Քո կարծիքը շատ հարկաւորսէ. նկատեց նրա յետեից Սամսոնեանը

մի առանձին հեղնական եղանակով։
Հիմա էլ կարծիքներով է խօսում ինձ
հետ։ Երեկ մէկէլ օրը փողոցները չափ-
չփում էր, բարդի խըստա վերցրի, պաշ-
տօն տվի և հիմա խօսք չէ ուզում հաս-
կանալ։ Դեռ երեք ամիս չկայ, որ ծա-
ռայում է, մեզ բան է ուզում սովորե-
ցնել։ Մի ամբողջ շաբաթ է, որ գլուխս
տանում է.—հայ, կազարմաները կեղ-
տոտ են, օդը քիչ է, լոյսը քիչ է, ոռ-
ճիկները քիչ է... Կարծես գլխիս կան-
տրոլ է եկել։ Այսպէս մեծ-մեծ խօսող-
ներին պէտք է վոնդել և կարգին, հա-
մեստ տղերք վարձել, որ գործը առաջ
գնայ։ Դեռ մարդիկ էլ են գտնում, որ
այդպիսի խելագալների ձեռքին ըեկա-
մենդացիա են դնում։

Ներկայ եղողներից ոչ ոք չէր ու-
զում, կամ աւելի ճիշտ՝ ոչ ոք չէր հա-
մարձակւում խանգարել ոգեորւած կա-
րապետ Խւանիչին, և վերջինս էլ աւե-
լի խրախուսւած այս հանգամանքից,
նորից շարունակեց իր ճառը, մերժ
սրա և մերթ նրա երեսին նայելով, որ
տեսնէ թէ իր խօսքերը ինչ տպաւորու-
թիւն են գործում։

—Յիմար, վերցրել է բարոչիներին

մի-մի մանէթ աւելացրել, կարծես թէ
ստացածները քիչ է։ 17 ըուբլի են
ստանում, թող 7-ը ուտէ, 10-ը պահէ։
Իո ամբողջ Բալախանին իրանց չէին
տալու։ Զարմանալի չէ... Թանտանից
յետոյ հարիւր հազարանոց սկւաժինա
է փչացել, տրուբաները կուչ են եկել
և դադարել է խփելը։ մի շաբաթ է
ժելոնկան № 19-ի մէջ նստած, օրա-
կան վեց հազար փութ դաբիչայից զրկ-
ւում ենք, այս սերիօգնի բաների վրայ
չի մտածում, այլ վերցնում է ոռնիկ
աւելացնում, կարծես թէ բարոչին որ
մի մանէթ աւելացրաւ, հէնց էն է միլիօ-
նատէր է դառնալու։ Գործի վրայ պի-
տի մտածել, գործի...»

—Է՞հ, էլի կարելի էր աւելացնել,
բայց ինքնապուխ բան բոնելը լաւ չէ։
մէկ էլ որ ամեն բան իր ժամանակն
ունի. ցինիկաբար նկատեց կառավար-
չի օգնականը, ոչ թէ մի սիտք յայտ-
նելու համար, այլ մի բան էլ ինքը ա-
սած լինելու համար։

—Չեն թողնում, որ մարդ գոնէ
մի օր հանգիստ մնայ. շարունակ ա-
րիւն են պղտորում. այս երեկոյեան
ճանապարհելու եմ և էլի եկան առիւնս

իսառնեցին։ Շատ էլ լաւ են անում...,
Մի բան նկատեցիր, կնիժկան առ,
ըստու գրիր, ուրիշ ոչինչ. այ, այն
ժամանակ ամեն մարդ իր տեղը կ'ձա-
նաչի։

Ապա դիմելով հաշւապահին՝ ասաց.
— Լեռն, Գրիգորի ըստօտը գրիր,
այն երկու լաբօչիների հետ միասին.
ամառ ժամանակ է, մարդ չի ճարւում.
թող գնան տեղ գտնեն ու զլիներիցս
ուղղ լինեն. ինձ մեծ-մեծ խօսդներ չի
հարկաւոր. ինձ համեստ տղերք է հար-
կաւոր։

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ Է ՏԵՍՆԵԼՈՒ

ՄԵՐ. Եսայեանի

ՕՐԵՆՔԸ

(Պատկեր Բալախանու կեանքից)



ԳԻՆԸ Յ ԿՈՊ.

ՏՊԱԳՐԻՈՒՄ Ե

Վ. Փափազեանի

ՄԱՐԴԱԳԱՅԼԸ

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

ՏՊԱԳՐԻԵԼՈՒ ԵՆ

- Վ. Փափազեանի՝ Ստամբուլի համար 5 կ.
» Մարդագայլը 10 կ.
Մելք. Եսայեանի՝ Օրէնքը
Պատկեր Բարձրախանու կեանքց.
Վ. Գօրկիյի՝ Եմելիան Պիլեայ. թ. Մուշէ վ.
Մ. Նորդառուի՝ Տօնի գիշերը. թ. Լ. Բարա-
յեանի. և այլն:

Շուտով ձեռնարկւելու է նաև ոռու-
սերէն մի շարք գրւածքների տպագրու-
թիւնը:

Գրքերի գլխաւոր պահեստը գտըն-
ւումէ Թիֆլիսում, Ընկերութեան գոր-
ծավար Գ. Բաբուրեանի մօտ,
(Քւարցօվայա փողոց, Առևար. Տուն
Ն. Բողարջեանի):

Պահեստատեղից գիրք պահանջողիս
30% զեղջ. եթէ պատէրը 25 ր. հաս-
նի՝ ճանապարհածախոսը ընկերութեան
հաշվին է; Վճարը պիտի լինի կանխիկ.
Կարելի է նաև վերադիր վճարով. կօ-
միսիայով՝ ոչ ոքի:

ԼՈՅԱ ԵՆ ՏԵՍԱԿ

1. ԹԱՐԱՎԱԽՄԱՆ ԳԻՇԵՔ, պատմ. զրոյց
Լէօն. 2-րդ տոլ. (սպառւած) 5 կ.
2. 26 ՏՂԱՄԱՐԴ ԵՒ 1 ԱՂՋԻԿ, վէպիկ
Մամիկ Գօրկիլի. թարգ. Մուշե
վարդապետի 5 կ.
3. ԽԵՆԹԲ և ուրիշ զրոյցներ, մ., Փա-
փազեամի (սպառւած) 10 կ.
4. ԿԵԱՆՔԻ ԴԱՄԱ, պատմւածք Ա., Ան-
դրեամի, 2-րդ տարգը. 5 կ.
5. ՄՊԻՑԱԿ ԾԱՂԻԿ, Նօլէլու, Էլ. Օ-
ժէշկի թարգմ. Ա. Շահվերդեանի 5 կ.
6. ԱՐՏԻՄԱԾԱ, վէպիկ Շիրվանդադէկ 15 կ.
7. ԵՂՈՒ ՔՈՒ ԲԱԼՈԾԱ, պատմւածք
Շահրիարի (սպառւած) 3 կ.
8. ԵԱՊՈՆԻԱ, (համաօտ տեսովիւն)
Խ. Խաչարեանի 3 կ.
9. ԳԱՆԳՈՒ ԱՆԻԾԱ, Մակիմ Գօրկիլի,
թարգ. Ա. Աթայեանի 3 կ.
10. ԻՄ ԱԽԵԿԻԾԱ, Մակիմ Գօրկիլի
թարգ. Ա. Աթայեանի 10 կ.
11. ՄԵԾ ՓԱԿԱՆՔ և ԱՐԻՒԾԵ ՄՊԱԾ
Վ., Փափազեամի 3 կ.
12. ՊԱՅՏԱՐԻ ՀՈԳԻՆ և ԱՆԿԵՂԾ ԸՆ-
ԾԱՅ, Վ., Փափազեամի 4 կ.
13. ԽԵԼՈՔ ԱՐԱՂԱՂՆԵՔ ԵՒ ԴՐԱԽՄԱԾԱ,
Վ. Փափազեամի 5 կ.
14. ՄԻՐԱՅ ՀՈՎԻԾԱ, Ա. Աթայեանի 3 կ.
15. ՎԻՇԱԳ և ուրիշ զրոյցներ, Վ., Փա-
փազեամի 5 կ.
16. ԵՐԱԶ-ՄԵՂ, Եսայեանի 3 կ.
17. ԵՐԿՈՒ ԹԻՇՈՂՆ-Վ., Փափազեամի 3 կ.
18. ՄԻ ՐՈՒԲԻՇ...ՄԵՂ. Եսայեանի 3 կ.

Ձօն. Առաջ. 16 Հեկտեմբեր 1904 թ. Տիֆլու. Տի. «Գերես»

ՀՀ Ազգային գրադարան



NL0333909

28639